# ԿԱՆԱՅՔ ԵՒ ԱՂՋԻԿՆԵՐԸ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ

*Posted on March 3, 2026 by Lucy Deukmejian*




**Category:** Opinions

**Տատյանա Դարբինյան,** ԾԻԼ համայնք, ԱՄՐՈՑ հիմնադրամ, Երեւան, 26 փետրվար 2026

Դարեր շարունակ գիտության դռները կանանց համար փակ են եղել ոչ թե տաղանդի պակասի, այլ պարզապես կանխակալ պատկերացումների պատճառով: Մինչ Մարի Կյուրին ստիպված էր սովորել «ընդհատակյա համալսարանում», իսկ տասնյակ հանճարեղ կանայք իրենց հայտնագործությունները հրապարակում էին տղամարդկանց անուններով, աշխարհը կորցնում էր իր մտավոր ներուժի կեսը: Գիտությունը փաստերի և տրամաբանության աշխարհ է, որտեղ նախապաշարումներին տեղ պետք չէ լինի, սակայն պատմությունը մեզ հակառակն է ապացուցել:

Փետրվարի 11. օր, երբ գիտական հանրույթը խոնարհվում է կին գիտնականների անցյալի ու ներկայի ձեռքբերումների առջև: Սա լավագույն պահն է ևս մեկ անգամ փաստելու, որ գիտական մտքի ու տաղանդի համար սեռը երբեք պատնեշ չէ:

Անցյալի և ներկայի միջև տարբերությունը տեսանելի է անզեն աչքով, սակայն այն ավելի խորն է, քան պարզապես համալսարան ընդունվելու թույլտվությունը: Եթե անցյալում կին գիտնականը բախվում էր բացահայտ օրենսդրական արգելքների և նրա հաջողությունները հաճախ վերագրվում էին ամուսնուն կամ գործընկերոջը, ապա այսօր պատնեշները դարձել են «թափանցիկ»: Մենք հաղթահարել ենք իրավական արգելքները, բայց դեռ պայքարում ենք հոգեբանական պատնեշների դեմ: Այսօրվա աղջիկները դեռևս լսում են «սա տղամարդու մասնագիտություն է» կամ «աղջիկները թույլ են մաթեմատիկայից» արտահայտությունները: Սրանք հայ իգական սեռի նոր սերնդի միտքը կաշկանդող ժամանակակից շղթաներ են:

Խտրականության բացառումը գիտության մեջ՝ մարդկության առաջընթացի միակ ճանապարհն է: Երբ մենք ստեղծում ենք միջավայր, որտեղ աղջիկը, վախենալով չհասկացված լինելուց, վարանում է ընտրել ֆիզիկայի կամ ինժեներիայի ուղին, մենք զրկում ենք գիտությունը նորարար լուծումներից: Ժամանակակից աշխարհի բարդ խնդիրները՝ կլիմայական փոփոխություններից մինչև արհեստական բանականություն, պահանջում են բազմակողմանի մտածողություն, որը հնարավոր չէ առանց կանանց լիարժեք ներգրավման:

Իրականում, գիտության մեջ կանանց ներգրավումը միայն «թիվ լրացնելու» կամ հավասարության հարց չէ: Խնդիրն այն է, որ աշխարհը նայում է գիտությանը միայն «մեկ աչքով», երբ այնտեղ չկան կանայք: Մենք բոլորս տարբեր ենք մտածում, տարբեր հարցեր ենք տալիս ու տարբեր խնդիրներ նկատում:

Պատկերացրեք մի իրավիճակ, երբ դեղամիջոցները կամ մեքենաների անվտանգության համակարգերը նախագծում են միայն տղամարդիկ և միայն տղամարդկանց համար: Պատմությունը ցույց է տվել, որ նման դեպքերում կանանց առողջական կամ մարմնական առանձնահատկությունները պարզապես «դուրս են մնում»

հաշվարկներից: Կին գիտնականը լաբորատորիա է բերում իր փորձը, իր զգացողությունն ու այն հարցերը, որոնք տղամարդը գուցե երբեք չտա:

Գիտությունը նման է հսկայական գլուխկոտրուկի: Եթե մենք թույլ ենք տալիս, որ այդ գլուխկոտրուկը հավաքի մարդկության միայն մի հատվածը, մենք երբեք չենք տեսնի ամբողջական պատկերը: Կլիմայի փոփոխությունից մինչև նորագույն տեխնոլոգիաներ՝ մեզ պետք են բոլոր տեսակի ուղեղները, բոլոր տեսանկյունները: Երբ աղջիկները մտնում են գիտություն, նրանք իրենց հետ բերում են նոր լուծումներ, որոնք մինչ այդ պարզապես «անտեսանելի» էին:

Ի վերջո, եթե մենք ցանկանում ենք լուծել աշխարհի ամենաբարդ խնդիրները, չենք կարող մեզ թույլ տալ օգտագործել մեր ընդհանուր ներուժի միայն կեսը: Մեզ պետք են մյուս կեսի տաղանդը, համառությունն ու երևակայությունը ևս:

Մեր երկրում գիտնական կինը երբեք օտար երևույթ չի եղել, սակայն այսօր մենք թևակոխում ենք մի նոր փուլ: Հայաստանը պատմականորեն ունեցել է կին փայլուն գիտնականներ՝ աստղաֆիզիկոսներից մինչև կենսաբաններ, ովքեր իրենց ավանդն են ներդրել թե՛ խորհրդային, թե՛ համաշխարհային գիտության մեջ: Այսօր մեր լաբորատորիաներում և SS ընկերություններում ավելի ու ավելի շատ ենք տեսնում երիտասարդ աղջիկների, ովքեր չեն վախենում բարդ մարտահրավերներից: Սակայն Հայաստանում դեռևս առկա է մի նուրբ խնդիր. հաճախ աղջիկները փայլում են դպրոցական կամ համալսարանական տարիներին, բայց առաջխաղացքի (կարիերայի) հաջորդ փուլերում բախվում են ընտանեկան ու հասարակական սպասելիքների «պատնեշին»: Մեր երկրի առաջընթացի բանալին հենց այստեղ է՝ ստեղծել միջավայր, որտեղ հայ աղջիկը ստիպված չի լինի ընտրություն կատարել գիտության և անձնական երջանկության միջև: Տեսնելով հայուհիների հաջողությունները միջազգային օլիմպիադաներում կամ գիտական դրամաշնորհներ ստանալիս, հասկանում ենք՝ մեր գիտական ապագան հուսալի ձեռքերում է, եթե միայն չխանգարենք հայուհիներին երազել ու ստեղծագործել:

Ուստի, փետրվարի 11-ը պարզապես օրացույցի հերթական ամսաթիվ չէ: Սա հիշեցում է մեզ բոլորիս, որ գիտությունը սահմաններ, ազգություն և, առավել ևս, սեռ չունի: Յուրաքանչյուր աղջիկ, ով այսօր առաջին անգամ ձեռքն է վերցնում մանրադիտակը կամ գրում է իր առաջին գիտական հոդվածը, պետք է իմանա՝ իր առջև բաց են բոլոր ճանապարհները: Մենք պետք է դադարենք զարմանալ «կին ֆիզիկոս» կամ «կին ինժեներ» տեսնելիս և սկսենք պարզապես գնահատել այն միտքն ու եռանդը, որ նրանք ներդնում են աշխարհին ավելի լավը դարձնելու համար:

# There are no comments yet.